ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ ՆՈՐ ԱՏՐԱԿՑԻՈՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՎ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՊՈՒՐԱԿԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018թ. նոյեմբերի 20-ին Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային բաց քննարկում՝ Արմավիրի քաղաքային զբոսայգում նոր ատրակցիոններ ունենալու և Շառլ Ազնավուրի անվան պուրակի նախագծի վերաբերյալ: Քննարկմանը մասնակցում էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի տեղակալները, աշխատակազմի աշխատակիցներ, ավագանու անդամներ, ԶԼՄ ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, երիտասարդներ և դպրոցականներ:

Համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանը, ներկայացրեց քննարկվող հարցերը:

Մեծանուն երգահան Շառլ Ազնավուրի պուրակի նախագծի վերաբերյալ ներկայացրեց ճարտարապետների միության անդամ, ճարտարապետ Հայկ Ասատրյանը: Համաձայն նախագծի, պուրակում պետք է լինի Ազնավուրի հուշարձանը, թվով չորս ցայտաղբյուր և կանաչ գոտի: Հեղինակը ներկաների քնարկմանը ներկայացրեց մի քանի տարբերակներ : Ավագանու անդամ Խ. Հարությունյանն առաջարկեց մեկ այլ վայրում տեղակայել պուրակը, մասնավորապես՝ մշակույթի տան հարակից այգում: Առաջարկ եղավ նաև հուշարձանը քաղաքային զբոսայգում տեղադրելու վերաբերյալ:

Դ. Խուդաթյանը նշեց, որ Հանրապետության փողոցի վրա պուրակի կառուցումը նպատակահարմար է, քանի որ բանուկ հատված է, իսկ քաղաքային այգում գերկենտրոնացում է, որտեղ կան հուշարձաններ: Խ. Մկրտչյանը նշեց որ, ճարտարապետական կոթողը պետք է իր չափերով ներդաշնակ լինի միջավայրին և ապահովվի կանաչ գոտու առկայություն:

Եղավ կարծիքների փոխանակում. առաջարկվեց պուրակում ապահովել Ազնավուրյան երաժշտության հնչելիություն:

Հանրային քննարկման երկրորդ հարցի՝ քաղաքային զբոսայգում նոր ատրակցիոններ ունենալու նախագծի վերաբերյալ իր առաջարկներով ներկայացավ Մայիս Սարգսյանը: Նա ներկայացրեց զբոսայգու հին ատրակցիոնների նորոգման և նորի կառուցման վերաբերյալ իր նախագիծը, որը նախատեսում է մոտ 3000 քմ տարածքի վրա մանկապատանեկան հանգստի-զվարճանքի կենտրոն ստեղծելու գաղափարը՝ 5 տարիների ընթացքում: Ծրագրի հեղինակը նշեց, որ այն քարե շինություն չի նախատեսում: Ծրագրի հեղինակը ներկայացրեց սխեմա-հատակագիծ , ժամանակակից կարուսելների տեսանկարներ: Ըստ ծրագրի նախատեսվում է տարածքի վարձակալություն՝ 25 տարի ժամկետով:

Ծավալվեց ակտիվ և արդյունավետ քննարկում:

Հանրային քննարկմանն առցանց հետևում և իրենց հարցերով մասնակցում էին համայնքի բնակիչները: